Նար-Դոս

Տանտիրոջս աղջիկը

4

10

Վեց տարի էր անցել:

Այդ վեց տարվա ընթացքում հայ ուսուցչի անհաստատ վիճակը Թիֆլիսից ինձ դարձյալ գավառներն էր նետել:

Ամառվա արձակուրդներին եկել էի Թիֆլիս, թեմական տեսչի մոտ՝ իմ և հոգաբարձության միջև ռոճկիս վերաբերմամբ ծագած մի վեճի համար:

Մի անգամ փողոցով անցնելիս հանդիպեցի Քալիենց բակում ապրող այն կնոջը, որին ազատել էի իր արբեցող մարդու գազանային ճիրաններից, բայց որի պատճառով դագանակի հարված էի ստացել ծոծրակիս, նույն այդ գազան մարդու ձեռքով: Այդ վեց տարվա ընթացքում այնքան էր փոխվել, որ հազիվ ճանաչեցի և եթե ինքը չկանգներ չբարևեր, կթողնեի կանցնեի. ավելի կմախքացած, ավելի կորացած, այժմ ուղղակի պառավի էր նմանում իր սև, հնամաշ հագուստի մեջ:

Այդ դո՞ւք եք, տիկին: Ինչքա՛ն փոխվել եք:

Է՛, եղբայր, հառաչեց նա, ինչ որ ես կրեցի իմ մարդու ձեռքից ամբողջ տասնհինգ տարի...

Հիմա խելոքացե՞լ է, էլ չի՞ խմում, չի՞ ծեծում:

Նորից հառաչեց.

Կա՞, որ խմի, ծեծի...

Ինչպե՞ս թե...

Մեռավ:

Մեռա՞վ... ի՞նչ եք ասում: Ե՞րբ:

Այս երկրորդ տարին է:

Ձայնը դողաց. առանց շտապելու գրպանից հանեց թաշկինակը և սեղմեց աչքերին:

Ապշեցի: Մի՞թե այն գազանի համար էր արտասվում:

Մի զարմանաք, ասաց կերկերուն ձայնով, կարծես մտքինս գուշակելով: Նա այնքան էլ վատ մարդ չէր, բայց անտեր մնա գինին... Եթե շատ էլ որ վատ մարդ լիներ, ինչ ուզում է լինի, էլի իմ ամուսինն էր, իմ թագն ու պսակը...

Ինձ մնում էր միայն ուսերս թոթվել տարակուսանքով այդ նահատակ հայ կնոջ առասպելական անհիշաչարության վրա:

Հետագա հարցուփորձից իմացա, որ «պիանիցը» մեռել էր սպիտակ տենդից:

Էլի այն տա՞նն եք ապրում, շարունակեցի հարցուփորձս, որպեսզի կողմնակի կերպով մի խոսք դուրս քաշեմ Քալիի մասին:

Ոչ: Ամուսնուս մահից հետո դուրս արին, որովհետև սենյակի վարձը չէի կարողանում վճարել: Դե ես հիվանդ եմ, ինչքան էլ չարչարվում եմ, սրա-նրա համար լվացք եմ անում, թոկ եմ գզում, տոպրակներ կարում, էլի հազիվ եմ կարողանում կես կուշտ, կես տկլոր պահել երեխաներիս, ո՞ւր մնաց թե կարողանայի ամսական տասը ռուբլի սենյակի վարձ տալ: Շատ, շատ վատ

մարդ էր մեր տան տերը, իսկ նրա կինը խո... գիտեք էլի, ամեն օր կռիվ ու ղալմաղալ էր մեր բակում նրա պատճառով, երբեմն այնքան դատարկ բանի համար, որ մարդ զարմանում էր:

Իսկ նրանց աղջի՞կը, չկարողացա դիմանալ և հարցրի ես:

Քալի՞ն: Վայ, ես նրա հոգուն մեռնեմ. նա աղջիկ չէ, նա հրեշտակ է: Եվ ես զարմանում եմ, մի՞թե կարող էր այնպիսի մի հոր ու մորից այդպիսի մի հրեշտակ ծնվել: Նա որ չլիներ, մեզ վաղուց էին դուրս շպրտել այն տանից իմ մարդու պատճառով: Նա էր, որ ինձ մխիթարում էր և օգնում ինչով որ կարողանում էր, ծնողներից ծածուկ:

Ուզում էի հարցնեմ ամուսնացա՞ծ է, լեզուս չէր զորում: Վախենում էի դրական պատասխան տար: Բայց նա, կարծես մտքինս գուշակելով, ասաց.

Ափսո՛ս, հազար ափսոս, որ իրեն արժանի մարդու չտվին, բոլորովին տգետ, պառավ, համարյա իր հոր տարիքի այրի մարդ է, այնպես որ մի կին արդեն թաղել է: Բայց ասում են, շատ հարուստ է, Կախեթում ահագին այգիներ ունի, գինու վաճառքով է զբաղվում:

Առժամանակ կանգնած էի շանթահար. ականջներիս չէի հավատում. ամեն բան կսպասեի Քալիից, բայց այդպիսի բան...

Եվ Քալին համաձայնե՞ց այդպիսի մարդու կինը լինել, բացականչեցի ես:

Ի՞նչ կարող է անել խեղճ աղջիկն այնպիսի հոր ու մոր ձեռքին: Նշանված ժամանակ քանի՛ անգամ եմ տեսել նրան տխուր, արտասուքն աչքերին...

Էլ բան չհարցրի, թողի ու փախա. սարսափում էի ուրիշ մանրամասնություններ լսեմ: Արդեն այն էլ, ինչ որ իմացա, քիչ էր մնում ինձ խելքահան աներ:

Տգետ, պառավ, գինեվաճառ... այդ բառերը եկան մեկը մյուսի ետևից շիկացած շամփուրների պես ցցվելու ուղեղիս մեջ, որպեսզի այլևս չհեռանան այնտեղից: Գինեվաճառի այդ տիպը ինձ շատ լավ ծանոթ էր Թիֆլիսի Շիրաշխանա կոչված այն զառիվայր փողոցից, ուր կենտրոնացած են Կախեթի գինու խանութներն ու

պահեստները՝ լիքը գինու հսկայական տակառներով և ռումբիներով: Վեց տարի առաջ Հավլաբարի դպրոցից դասերս ավարտելուց հետո տուն դառնալիս ես համարյա թե ամեն օր տեսնում էի այդ տիպը: Իր ռումբու պես ուռուցիկ փորով, որի վրա արծաթե գոտին չտեղավորվելու պատճառով թռել էր դեպի կուրծքը, մեկի տեղ եռածալ կզակով, զուռնաչու պես փքած կարմիր թշերով և գոմշի վզով, որի մսերը ծալ-ծալ նստել էին ուսերին ու վզին, նա նստած էր լինում իր խանութի առջև քահրուբարի տեր-ողորմյան ձեռքին և ճարպակալ աչքերով նայում էր իր այդ օրվա ճաշին: Այդ ճաշը պատրաստվում էր հենց այդտեղ, խանութի առջև, փողոցում. դա ոչխարի ամենաընտիր, ամենաճարպոտ մսի խորոված է, որի շամփուրները մանղալի առջև պպզած շուռումուռ էր տալիս նրա գործակատարը և որի ճարպահոտն ու ծուխը բռնել էր ամբողջ փողոցը:

Եվ Քալին այդպիսի մարդու կի՛նն էր դառել...

Որ ասեմ թե դեռևս սիրում էի Քալիին չէ. սերս կամաց-կամաց սառել էր այն օրից, երբ հույսս միանգամայն կտրեցի նրանից: Այդ ինձ համար պատմական այն օրն էր, երբ նրա մայրը եկավ ինձ մոտ և քիչ մնաց ծվիկ-ծվիկ աներ ինձ, որ համարձակվել էի աչք բռնել իրենց աղջկա վրա: Ուրեմն նրա ամուսնության լուրն առնելիս ինձ այդպես սաստիկ ազդողն այն չէր, որ այժմ Քալին արդեն հաստատապես և վերջնականապես կորած էր ինձ համար, այլ այն, որ ես միանգամից թափանցեցի իրերի դրությունը: Իսկ իրերի այդ դրությունը հետևյալ կերպով էր ներկայանում ինձ. Քալին, լավ թե վատ, միջնակարգ կրթություն ստացած, կուլտուրայի շավղի վրա դրված ինտելիգենտ աղջիկ էր. քիչ թե շատ հետաքրքրվում էր կամ գոնե սկսել էր հետաքրքրվել գրականությամբ, հասարակական խնդիրներով: Եվ հանկարծ այդպիսի մի աղջիկ կին էր դարձել մի պառավ, տգետ գինեվաճառի, որի ուշքն ու միտքն անշուշտ իր տոգած փորից և փողի սնդուկից դենը չի տարածվում: Ի՜նչ զարհուրելի կենակցություն պիտի լիներ նորատի, կենսուրախ, թովուն մի աղջկա և կյանքի ամբողջ հմայքը կորցրած, բայց անշուշտ վավաշոտ մի ծերունու միջև: Ինչի մասին պիտի խոսեին նրանք իրար հետ, ինչպե՞ս պիտի համակերպեին իրենց հասկացողությունները, իրենց հայացքները, իրենց զգացումները, ճաշակը, հակումները... Կարելի բա՞ն էր միթե միացնել երկու հակառակ բևեռներ: Կարելի բա՞ն էր միթե նորաբողբոջ ծաղիկը տնկել հոտած, մգլած ճահճի մեջ...

Որ այդ ամուսնության մեջ մեղավոր էին Քալիի ծնողները, որ նրա կամքի և զգացումների վրա ամենաանխիղճ, ամենաբիրտ բռնություն էր կատարված ծնողների կողմից, այդ լույսի պես պարզ էր ինձ համար. բայց ինձ վերին աստիճանի զարմացնում էր այն հանգամանքը, թե մի՞թե Քալիի մեջ չկար ինքնուրույնության, ազատասիրության մի կայծ անգամ, որ դիմադրեր իր տգետ՝ անհասկացող ծնողների ստիպմունքին: Հապա էլ ի՞նչ բանի էր պետք նրա ստացած կրթությունը, ուսումը: Իսկ չէ՞ որ ուսման, կրթության ուժն ու զորությունը հենց այն է, որ մարդուն գիտակից է դարձնում, նրա մեջ ինքնուրույնություն է զարթեցնում, բարոյապես ինքն իր տերն է դարձնում նրան: Նա կամքի այնքան ուժ չունեցավ, որ դիմադրեր ծնողներին իմ վերաբերմամբ, թեև անտարբեր չէր դեպի ինձ, գուցե մասամբ և վախեցավ այն բանից, որ մի թափառական չքավոր ուսուցչի կին լինելը շատ էլ վարդագույն հեռանկարներ չէր բանալու իր առջև. բայց մի՞թե կամքի այնքան ուժ էլ չունեցավ, որ բացեիբաց մերժեր հենց թեկուզ միմիայն տարիքով իրեն միանգամայն անհամապատասխան մարդու ձեռքը, ինչքան էլ որ այդ մարդը հարուստ լիներ: Դրա համար խո կախաղան չէի՞ն հանի նրան:

Ուրեմն ճիշտ էր նրա երեսին շպրտած իմ խոսքը. նա փալաս էր, կամքից, անհատականության, ազատասիրության զգացումից զուրկ մի արարած, մի խոսքով քաղքենի հայ ընտանիքի մեջ մեծացած տիպիկ մի աղջիկ, որի մեջ ուսումը, կրթությունն ամեն բան փոխում է, բացի ստրկական ոգուց: Եթե այդ ստրկական ատելի ոգին մոր կաթի հետ չէր ծծվել և արմատացել նրա մեջ, հապա էլ ո՞ր դեպքում պիտի արտահայտվեր, եթե ոչ ամուսնության խնդրում, մի խնդիր, որը ոչ միայն իրեն՝ ամուսնացողի, այլև իր ամբողջ հետագա սերնդի բախտի հիմքն է դնում: Խո չէ՞ր կարելի ընդունել, թե Քալին այդ չէր հասկանում իր ձեռքը տգետ, պառավ գինեվաճառին տալիս:

Եթե անգամ նա չէր հասկանում, եթե չէին հասկանում նրա ծնողները, գոնե նրա բարձրագույն կրթության տեր էսկուլապ եղբայրը պիտի հասկանար և քրոջ սիրույն ետ կասեցներ ծնողներին իրենց կործանարար քայլից: Կամ գուցե քաղքենության ծոցից ելած այդ համլսարանական ինտելիգենտի մեջ ևս հավիտենական մի անեծքով պինդ նստած էր քաղքենին՝ աչքը տնկած իր հարուստ փեսայի քսակին....

Ո՞վ գիտե: Սրանք միայն ենթադրություններ՞ ասեմ, թե տրամաբանական հետևություններ էին, որ անում էի ես կատարված փաստից:

Այժմ ես արհամարհում էի Քալիին էլ, նրա եղբորն էլ: Նրանց ծնողների մասին խո էլ չեմ խոսում: Եթե դեպի Քալին տածած նախկին սիրույս ավերակներից մի-մի բեկոր դեռևս մնացել էին սրտիս խորքում թաղված, երբեմն-երբեմն միայն մխալով, դրանք էլ միանգամից փշրվեցին, փոշի դարձան:

Բայց ինչպես երևում էր, հիասթափությունս միայն սրանով չպիտի վերջանար: Ինձ վիճակված էր անձամբ ականատես լինելու բնական երևույթի տրամաբանական հետևությանը:

Ահա թե ինչպես:

11

Թիֆլիսում այդ ամառ ես իջել էի իմ մի լավ բարեկամի մոտ, Հավլաբարում:

Հավլաբարն ընդհանրապես Թիֆլիսի կեղտոտ քաղաքամասերից մեկն է, իսկ բարեկամս այդ քաղաքամասի ամենաեռ ընկած ամենակեղտոտ փողոցներից մեկումն էր ապրում: Հունիս ամիսն էր, եղանակը տոթ. երեկոյան դեմ նստած էինք դեպի փողոց նայող պատշգամբում, թեյ էինք անուշ անում և վայելում ամեն կողմից փչող գարշահոտությունը: Ներքևը՝ կիսախարխուլ, տափակ կտուրով մի տան առջև, փողոցի համարյա թե մեջտեղում, զանազան աղտեղություններով ծածկված մերկ գետնի վրա, մի-մի սեպ քար տակներն առած, նստոտած էին մի խումբ պառավ և ջահել կանայք, ոմանք ուղղակի բոբիկ ոտներով և գլխների փաթաթների ծայրերը ետ արած, որ մի քիչ հով փչի քրտնակոխ երեսներին: Տոթը դուրս էր քշել նրանց իրենց խոնավ ու մութ տնակներից և նրանք եկել հավաքվել էին մեկտեղ իրենց առօրյա դարդերից խոսելու և բամբասանքների տոպրակը բանալու: Նրանց շուրջը ականջ խլացնող ճիչ ու ծղրտոցով վազվզում էին բազմաթիվ երեխաներ, ոմանց հագին միայն մի շապիկ և ոմանց հագին միայն մի վարտիք: Ինչպես երևում էր, այդ երեխաները շատ էին խանգարում կանանց՝ իրենց բամբասանքները հանգիստ շարունակելու և նրանք անեծքակոխ անելով շարունակ քշում էին իրենց մոտից այդ չարաճճիներին: Չարաճճիները

մի ոոպե կորչում էին փողոցի այս կամ այն ծայրը և նորից ճիչ ու ծղրտոցով գալիս էին իրենց աղմկալի խաղը շարունակելու նրանց շուրջը: Կանանցից մեկը, որ, ինչպես երևում էր, ամենից ջղայինը և անհամբերատարն էր, հանկարծ վեր թռավ տեղից, վազեց բռնեց երեխաներից ամենաչարաճճիին և սկսեց տուր թե կտաս նրա մերկ հետույքին՝ այնքան կատաղի կերպով, որ շրմփոցի ձայնը մեզ էր հասնում: Երեխան երկար ժամանակ խլպլտում էր նրա ձեռքին, մինչև որ կարողացավ դուրս պրծնել և լաց լինելով փախավ: Կինը, սիրտը հովացրած, եկավ նստեց իր տեղը, շարունակելով իր անլուր անեծքները երեխաների «ետ գցողների» հասցեին: Ծեծված երեխայի ընկերներն ու ընկերուհիները հենց սկզբից ցրիվ էին եկել, անհետացել:

Փողոցը հազիվ մի քիչ հանգստացել էր չարաճճիների ճիչ ու ծղրտոցից, մեկ էլ տեսնեմ որտեղից որտեղ հանդես եկավ մի նոր կին, ինչպես երևում էր, ծեծված երեխայի մայրը: Նրա ձայնը դեռևս հեռվից էր լսվում: Գալիս էր կրակ կտրած աչքերով: Եկավ ու սկսվեց:

Բանավեճը կամ, ավելի լավ է ասեմ, բառավեճը սկզբում ծեծված երեխայի մոր և նրա երեխային ծեծող կնոջ միջև էր: Ասենք դա ավելի շուտ կատաղի մրցություն էր ամենաընտիր և մեծ տաղանդով շարահյուսված անեծքների, որոնց մեջ նույնիսկ հազվադեպ չէին տղամարդկանց բերնից ելնող և նրանց միակ սազական անհամեստ հայհոյանքներ: Հետո մրցությանը սկսեցին մասնակցել և ուրիշները: Մեկը մյուսի ետևից հանդես էին գալիս ընտանիքների այնպիսի կենսագրականներ, ուր «բոզը», «գողը», «կինտոն», «ղումարբազը», «չաթուքեսանը», «ջիբգիրը», «պիանիցը» և այլն, և այլն իրենց պատվավոր տեղն էին բռնել:

Բայց դա միայն նախերգանքն էր: Շուտով սկսվեց և բուռն գործողությունը մի շատ փառավոր ապաթյոզով: Երկուսի մենամարտը դարձավ ընդհանուր պատերազմ, որի մեջ չէր երևում ո՛վ էր հարձակվում և ո՛վ պաշտպանվում: Ձեռքեր էին, որ բարձրանում էին և իջնում շրմփոցով, քիթ ու պռունկ էր, որ ջարդվում էր, սուր-սուր եղունգներ էին, որ ցցվում էին մարմինների մեջ, շորեր էին, որ ծվիկ-ծվիկ էին լինում, գլխի փաթաթաններ էին, որ տրորվում էին ոտների տակ, մազեր էին, որ փունջ-փունջ պոկվում էին գլխներից և ցրիվ գալիս

գետնին...

Թեև այս տեսարանը ինձ շատ լավ ծանոթ էր դեռևս վեց տարի առաջ՝ իմ նախկին տանտիրոջ բակից, նրա կնոջ՝ գիժ-Կեկելի շնորհիվ, բայց սա մի գրանդիոզ բան էր իմ նախկին տեսածների հանդեպ: Ու մինչդեռ ես, կատարելապես ապուշ կտրած, դիտում էի կանացի այս պատերազմը, բարեկամս ծիծաղից փորը բռնած էր:

Էլ չդիմացա, վեր թռա տեղիցս, որ գնամ ամաչեցնեմ այդ խելագար կանանց և բաժանեմ իրարից, բայց բարեկամս վրա ընկավ թևիս և նստեցրեց տեղս:

Կաց, ասաց, թե չէ՝ քեզ էլ այն օրը կգցեն, որ հատ ոտով կփախչես: Սրանք այնպիսի ազազիլ արարածներ են, որ կատաղած ժամանակ մարդ կուտեն: Դու չես ճանաչում սրանց:

Սխալվում ես, վրա բերի ես, ես ոչ միայն ճանաչում եմ սրանց, այլև սրանց կարգին պատկանող ամենաազազիլներից մեկի շորշոփն եմ կրել անձամբ:

Հա-ա՞, ծիծաղեց բարեկամս, շատ հետաքրքրական է:

Ես քեզ կպատմեմ: Բայց առայժմ պետք է վերջ տա՞լ այս խայտառակությանը, թե ոչ:

Դու հանգիստ նստիր քո տեղը և հուզվելու տեղ զվարճացիր, իրենք իրենց վերջ կտան: Սրանց համար դա պարապ վախտվա խաղալիք է, իրենց առօրյա զբաղմունքներից մեկը: Շուտով հաշտություն կկնքեն, կողմերը կգնան իրենց կորուստները հաշվելու, վերքերին դարման դնելու և վաղը չէ մյուս օրը կտեսնես նրանց նորից մեկտեղ հավաքված առաջվա պես խաղաղ զրույց անելիս: Ես սրանց մշտական հարևանն եմ, գիտեմ սրանց բնավորությունը:

Ճիշտ է, հաշտությունը կնքվեց, բայց ոչ շուտով: Տուրուդմփոցը վերջացավ, բայց փոխադարձ անեծքներով ու հայհոյանքներով համեմված, կանանց ճիչ ու ծղրտոցները դեռ երկար ժամանակ շարունակվում էին, մինչև որ մութը կամաց-կամաց կոխեց, և ամեն մեկը քաշվեց իր տունը:

Ես ու բարեկամս համարյա մինչև կեսգիշեր նստած էինք պատշգամբում: Օդը զովացել էր: Փողոցը ննջում էր հանգիստ: Կանանց ճիչ ու ծղրտոցի տեղ այժմ ծղրիդների քուն բերող անդադրում ճռինչն էր լսվում:

Նստած էինք, և ես ամենայն մանրամասնությամբ պատմում էի բարեկամիս իմ սիրո պատմությունը: Չնայելով վեց տարվա վաղեմությանը, իմ մեջ նորոգվել էր այն բոլոր մաղձը, որ կուտակվել էր սրտիս խորքում դեպի իմ տանտերը, դեպի նրա կինը, դեպի նրա էսկուլապ որդին և մանավանդ Քալին, որ իմ բոլոր հույսերս խորտակեց իր «փալաս» լինելու շնորհիվ: Եվ պատմությանս ընթացքում ոչ մի զորավոր բառ չէի խնայում մաղձս թափելու համար:

Բարեկամս, որ շատ զվարճասեր մարդ էր, փոխանակ կարեկցությամբ լսելու պատմությունս, շարունակ ծիծաղում էր: Իսկ երբ հասա դեպքերի ֆինալին, այսինքն այն կետին, երբ գիժ-Կեկելը ներս պրծավ սենյակս, նամակս շպրտեց երեսիս «շեն քեցիանո», «շեն կոռ մամածաղլո» (դու քոսոտ, դու կոռ շանորդի) խոսքերով, նրա ծիծաղը հանկարծ այնպես բռնեց, որ գնդակի պես վեր թռավ տեղից և սկսեց պտույտ-պտույտ գալ, ոտները զարկելով հատակին: Հետո մի փոքր որ հանգստացավ, նորից նստեց իր տեղը և, անզուսպ ծիծաղից ջրակալած աչքերը սրբելով, ասաց.

Բավական է, էլ չշարունակես, էլ փիլիսոփայությունների պետք չկա: Մի անգամից ասա՝ քնձռոտ վարժապետ էի և աղջիկը չտվին ինձ: Թե չէ՝ էլ ի՛նչ քաղքենիություն ու մաղքենիություն, ի՛նչ ուսում ու մուսում: Դրանք դատարկ խոսքեր են: Քո պատմությունը, շարունակեց բարեկամս այս անգամ լրջորեն, ընդհանուր երևույթի հազարավոր վարիանտներից մեկն է, և այդ երևույթը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ մի նոր ջրհեղեղ գա և սրբի տանի մեր գիժ-Կեկելների սերունդը իրենց բարքերով և այն տեսարաններով, որոնցից մեկին մենք հանդիսատես եղանք այս երեկո...

Հետևյալ օրը ևս ականատես եղա մի ուրիշ երևույթի:

Առավոտյան ես ու բարեկամս դուրս եկանք, որ գնանք ես իմ, նա իր գործին: Փողոցի ծայրին իմ ուշադրությունը գրավեց կանանց մի խումբ, որ հավաքված էր մի տան նեղլիկ բակում: Երևում էր, որ նրանք այդ աղքատ թաղից չէին,

որովհետև շատ լավ էին հագնված:

Ո՞վքեր են, ինչո՞ւ են հավաքվել, հարցրի բարեկամիս:

Հերթի են սպասում:

Ի՞նչ հերթի:

Որ իմանան, թե իրենց հավը ո՛վ է գողացել. որ իմանան, թե գիշերը տեսած իրենց երազը ի բարի՞ն կկատարվի, թե ի չարը. որ իմանան, թե եթե չբերք են, ինչ պետք է անեն, որ բերքատու դառնան և ավելացնեն իրենց պես հիմարների թիվը կամ ընդհակառակն:

Ուրեմն այստեղ գրբա՞ց է ապրում և սրանք...

Ի՛նչ գրբաց, մի ֆենոմեն կին ասա, որ Սողոմոն իմաստունին ծարավ ջուրը կտանի ու կբերի, և աշխարհիս այն ո՞ր հռչակավոր գինեկոլոգ-պրոֆեսորն է, որ իր հմտությամբ կարողանա նրա պես բժշկել կանանց ամեն տեսակ հիվանդություններից ժառանգական, թե ամուսնական, և Աբրահամի գոգն ուղարկել շատերին...

Այն, ինչ որ ասում էր բարեկամս իրեն հատուկ հեգնանքով, իհարկե նորություն չէր ինձ համար. նորությունը, և միանգամայն անսպասելի նորությունը, գեթ սկզբի րոպեներին, ահա թե ինչն էր:

Դեռ չէինք ծռվել մյուս փողոցը, որ այնտեղից դուրս եկան երեք կին և գալիս էին մեր կողմը: Մեկը շատ պառավ էր երկուտակված մեջքով և հագիվ էր քայլում ձեռնափայտը ձեռքին: Մյուսը միջին տարիքի կին էր, իսկ երրորդը՝ շատ ջահել, թխադեմ, ժպտուն, կրակոտ աչքերով: Երեքն էլ հագնված էին վրացնակ, անխուսափելի չիխտի-կոպիով և թշերի վրա կախված կավիքներով: Երևում էր, որ հարուստ ընտանիքից էին: Ջահել կինը մի քիչ առաջ էր ընկել, միջին տարիքի կինը հետևում էր նրան, իսկ պառավը տնքտնքալով քարշ էր գալիս նրանց ետևից և անատամ բերանով ինչ-որ քրթմնջում:

Մոտներով անցնելիս հազիվ մի րոպե աչք գցեցի նրանց վրա, և դեռ մի քանի քայլ չհեռացած նրանցից, հանկարծ կանգ առա շանթահար ու ետ նայեցի:

Հը՛, երազ խո չտեսա՞ր, զարմացած հարցրեց բարեկամս:

Չպատասխանեցի: Նայում էի կանանց ետևից աչքերս չորս շինած:

Երեք կանայք գնացին, մի րոպե կանգ առան այն տան բակի առջև, ուր հերթի էին սպասում գրբացի կլիենտները և ներս մտան:

Հը՛, խոսիր է՛, կանչեց բարեկամս անհամբեր:

Խոսե՞մ, ի՞նչ խոսեմ, ասացի ես, զարմանքից, ապշությունից, անսպասելիությունից լեզու մնացե՞լ է բերանումս, որ խոսեմ: Գիտե՞ս ով էր այն ջահել կինը: Քալին էր, տանտիրոջս աղջիկը:

Հա՜ա՞: Սպասիր մեկ ձեռքս դնեմ կրծքիդ, ասաց բարեկամս կոմիկական լրջությամբ և իսկապես ձեռքը դրեց կրծքիս: Ոչինչ, լավ է տկտկում:

Ու ծիծաղեց:

Եվ դեռ ասում էիր, թե վաղուց թաղել մոռացել էիր նրան: Հը՞, բարեկամ, բռնվեցի՞ր:

Սկզբում ախր չճանաչեցի նրան, ասացի ես առանց ուշադրություն դարձնելու բարեկամիս սովորական ծաղրանքին, որովհետև մեջտեղով վեց տարի է անցել և, հետո, ի՛նչ կկարծեի, թե լաչակով կտեսնեմ նրան: Մորից ճանաչեցի, որ նա է, այն սոսկալի կնոջ երեսին նայելուց հետո միայն: Այն մեկն էլ ախր նրա մայրն էր: Իսկ այն պառավն անշուշտ սկեսուրը կլիներ: Եվ տեսա՞ր ուր մտան:

Տեսա:

Եվ ի՞նչ ես կարծում՝ լաչա՞կ կդներ գլխին և գրբացների դռնե՞րը ման կգար:

Ճիշտ է, լաչակ չէր դնի գլխին, իմ սիրելի հայկական Չացկի, բայց դեռ հարց է՝ գրբացների դռները չէ՞ր ման գա, արդյոք: Որովհետև ինչքան էլ որ քո

գաղափարները հալեցնեիր նրա գլխում, այնուամենայնիվ, քո գավառական քաղաքում հեռու-մոտիկ ազգական կամ հարևան այաններ ու աբլաներ կունենաս, որոնք կարիք եղած դեպքում կփսփսային նրա ականջին քեզնից ծածուկ և կտանեին իրենց ճամփով:

Եվ մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս սոսկալի երևույթը:

Մինչև ե՞րբ: Մինչև որ, ինչպես երեկ էլ ասացի, մի նոր ջրհեղեղ գա և սրբի տանի քո գիժ-Կեկելների, քո այանների ու աբլաների ամբողջ սերունդը իր բարքերով, սովորություններով, նախապաշարումներով, իր աղոթքներով ու անեծքներով և այն տեսարաններով, որոնցից մեկին ես ու դու հանդիսատես եղանք երեկ երեկո հենց այս փողոցում և այժմ՝ գրբացի բակում:

Իսկ մինչ ա՞յդ:

Իսկ մինչ այդ ես ու դու իզուր կնստենք չանա թակելու: Աշխարհասասան մի կատաստրոֆ, որ քար քարի վրա չթողնի, ահա թե ինչ է հարկավոր:

Ինձ ուրիշ բան չէր մնում ասելու, եթե ոչ համաձայնելու բարեկամիս եզրակացությանը: